

ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՏՈՒՐՅԱՆԻՆ

Անվանի պատմաբան, գրող, հրապարակախոս Լեոյի (Սոաբել Բաբխանյան, 1860—1932) ստորե ներկայացվող 16 նամակները ուղղված նշանավոր բանաստեղծ Ալ. Մատուրյանին (1865—1917), բովանդակում են պատմական, բանասիրական, գիտական հետաքրքիր փաստեր ու տեղեկություններ երկու մտավորականների կյանքի և նրանց ստեղծագործական աշխատանքի մասին:

Նամակները, որ պահվում են Ն. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի Ալ. Մատուրյանի ֆոնդում (№№ 275—293), տպագրվում են որոշ կրճատումներով:

Վ. Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

1

Հոկտեմբերի 4, 1899

Թիֆլիս

Ես ինքս պատրաստվում էի Ձեզ նամակ գրել, երբ ստացա սեպտեմբ. 20-ից Ձեր գրածը: Անշափ ուրախ եմ, որ իմ «Գրական դեմքերը»¹ լավ տպավորություն են գործել Ձեր շրջանում: Խնդրեմ ընդունեք իմ ջերմ շնորհակալությունը այն խրախուսական տողերի համար, որ դուք նվիրել եք այդ գործին: Այո, ես պիտի շարունակեմ, շուտով կտպագրեմ Աբովյան, Կապ կգան Նալբանդյան, Գամառ-Քաթիպա, Շահազիզյան: Այս հինգ հսկաները հիսունական թվականներն են ներկայացնում, մեր նոր գրականության սկիզբը: Ապագայում, եթե ինչ աջողվի, ես կանցնեմ երկրորդ շրջանին, յոթանասունական թվականներին:

Այժմ պատմում եմ, թե ինչի մասին էի ուղում Ձեզ նամակ գրել և գրանով պատասխանած կլինեմ Ձեր այն ցանկությանը, որ «Գրական դեմքերը» առանձին հրատարակվեն:

Անցյալ գարնան ես հանձն առա գրել Հրատարակչական ընկերության համար Նալարյանցի կենսագրությունը² մի շատ բնագործակ ծրագրով: Դա չորս ու ցամաք կենսագրություն չպիտի լինի, այլ համարյա մեր նոր գրականության առաջին շրջանի պատմություն: Գիտեք, իհարկե, թե որքան ծանր շործ է: Չունենալով ազատ ժամանակ, ես այնուամենայնիվ հանձն առա, օգտվելով այն մտքից, թե ինչ կաջողվի տալ մեր կուլտուրական և գրական կյանքի նկարագրությունը: Նոր շրջանը շարունակելու համար, իհարկե, պետք է դիմել հին շրջանին, ցույց տալ թե ինչ էինք մենք, ինչ սկսեցինք ձեռք բերել նոր ուղղության, նոր լեզվի շնորհիվ. պետք է գրել XIX դարի առաջին կեսի պատմությունը, որպեսզի կարելի լինի ցույց տալ, թե հասարակական ինչ հոսանքներ կային, ինչպես կազմակերպվեցին գործիչների բանակները, ինչ ազդեցությունների արդյունք են դրանք:

Այդ ահագին ծրագիրը ինձ վրա ահագին պարտականություններ է դնում: Մ.հա չորս ամիս է, ես ուսումնասիրում եմ նյութերը, կարդացի ահագին քանակությամբ գրքեր, նալարյանցի բոլոր աշխատությունները, «Հյուսիսա-

փայլը», «Մեղուն», «Մասյաց Աղավնին», մի խոսքով այն ամենը, ինչ լույս է տեսել Նաղարյանցի ժամանակ: Կարող էմ ասել, որ այժմ ինձ թվում է թե կաջողվի մի բավարար գործ կատարել այդ ծրագրի սահմաններում: Մի պակասություն միայն սաստիկ ճնշում է ինձ: Պատմությունը, իհարկե, պիտի պատի Նաղարյանցի շուրջը. մանրամասն տեսությունները պահանջում են, որ Նաղարյանցի կյանքն էլ մանրամասն պատմվի: Սակայն Նաղարյանցի կյանքը ունի ինձ համար բոլորովին անհայտ շրջաններ: Այսպես, ոչինչ հայտնի չէ նրա ուսանողական կյանքից, եթե չհաշվենք մի քանի կցկտուր տեղեկություններ, որոնք կան պ. Շահադիդյանի «Հրապարակախոս ձայնի»³ մեջ: Ինչպես դիտեր, Նաղարյանցի նամակագրությունների մի մասը հրատարակված է «Հանդես գրականական»⁴ և «Լուծալի»⁵ մեջ: Նա ունեւ տպվածները և տեսնում եմ թե ինչ ահագին օգնություն կարող են տնել այդ նամակները կենսագրողին: Ենթադրում եմ, որ շատ անտիպ նյութեր էլ կարելի է գտնել Մոսկվայում, ահա ինչու ուզում էի գրել Ձեզ:

Շատ խնդրում եմ նեղություն կրեք և իմանաք՝ արդյոք կարելի՞ է կլինի ձեռք բերել այդպիսի նյութեր: Զգիտեմ, Նաղարյանցի ընտանիքը պահել է հանգուցյալի թղթերը և կարելի՞ է օգտվել նրանցից: Իհարկե Նաղարյանցի մասին խոսողը պիտի օգնություն ստանա նրա ամենամոտիկ աշխատակցից և բարեկամից, որ բարեբախտաբար կենդանի է և իր ժամանակի անփոփոխ ավանդապահն է: Նա խոսում եմ պ. Շահադիդի մասին: Վաղուց վճռել եմ դիմել նրան, բայց չգիտեմ որտեղ է նա, և առհասարակ տրամադիր կլինի՞ օգնել ինձ: Այս հարցը, ես առանց պատճառի չեմ դնում: Դիտեմ պ. Շահադիդյանի առհասարակ մեր դեպի մեր գրականությունը, մանավանդ դեպի Նաղարյանցը, դիտեմ, որ նրա սրտին մոտ կլինի ամեն մի փորձ, որ աշխատում է լույս հանել հիսունական թվականների փայլուն շրջանը: Բայց և այնպես չեմ վրստահում դիմել նրան, որովհետեւ պիտի շատ նեղություն պատճառեմ նրան: Այսպես, ինձ հարկավոր են կենսագրական գոնե համառոտ տեղեկություններ «Հյուսիսսովետական» աշխատակիցների մասին (բացի Նաղարյանցից) և, եթե կարելի է, նրանց պատկերները: Ուրիշ ոչ ոք չէ կարող ունենալ այդ տեղեկությունները: Խնդրում եմ այս մասին էլ գրեիք ինձ: Շատ հարկավոր է ինձ նաև Նաղարյանցի «Յուրաքանչյուր ծառայություն», որպեսզի կարելի լինի գոնե մոտավորապես ճշտել մի քանի թվականներ, որոնց վերաբերմամբ սաստիկ խառնաշփոթություն է տիրում սովադրված աղբյուրների մեջ, այդ զոկումենտը միևնույն ժամանակ կլինի մի առաջնորդող թել ինձ համար, կարծում եմ որ դժվար չի լինի ստանալ այդ թուղթը կաղարյան ճեմարանից:

Եվ այսպես, հարգելի բարեկամ, ես կարոտ եմ օգնության այս մի դործի մեջ: Անշուշտ երջանիկ կլինեմ, եթե աջակցություն գտնեմ Նաղարյանցի հիշատակի պաշտոնների մեջ: Մինչև այժմ մենք միայն ընդհանուր անորոշ խոսքերով ենք փառաբանել մեր անմոռանալի վերանորոգչին: Այժմ պետք է տալ նրա պատմությունը, ընթերցողի առաջ դնել ամբողջ պատկերը: Արդյոք ի՞նչ կլինի վիճակված կատարել այդ գործը: Դա կախված կլինի այն հանգամանքից թե կօգնե՞ն ինձ արդյոք: Ես մտադիր եմ «Մշակի» միջոցով դիմում անել, որ ուղարկեն ինձ անտիպ նյութեր, Բայց այդ միջոցի վրա շատ չնչին հույս ունեմ. գլխավոր հույսս Մոսկվան է, և Ձեր ցուցմունքները ինձ համար շատ թանկագին կլինեն: Ես իմ կողմից ոչինչ աշխատություն չեմ խնայում: Միայն պարբերական մամուլի պատմության համար նյութեր ունենալու նպատակով

ես կարգացել եմ, կարդում եմ այն բոլոր հին լրագիրները ու ամսագրերը, որ կարելի եղավ գտնել այստեղ. կրկնում եմ, պակասությունը միայն կենսապրական նյութերի մեջ է:

Աշխատելով նազարյանցի կենսագրության վրա, ես մտածեցի «Մշակի» ընթերցողներին համառոտ էություններ տալ այն գործիչների մասին, որոնք հանդիպում էին ինձ: Բուն կենսագրության մեջ դրանք, իհարկե, իրենց տեղը կունենան. և եթե ինձ չաջողվի հրապարակ հանել կենսագրությունը, այն ժամանակ, իհարկե, միայն այդ էությունները կմնան արդեն իմ աշխատության ներքին...

Ներողություն էմ խնդրում, որ ժամանակին չեմ ուղարկել Ձեզ իմ «Մեկիբի աղջիկը»: Այս քանի օրը Դուք կստանաք մի օրինակ նվեր: Այս ամառ ես բացակա էի Թիֆլիսից, և չգիտեմ ժամանակի՞ն ստացաք Հրատարակչական ընկերությունից] Ձեր վարձատրությունը և «Պուշկինի քնարը»:

2

Հունվարի 6, 1900
Թիֆլիս

Վերջապես, ինչպես ասում են պոլսեցիք, «ի վիճակի եմ» Ձեզ պատասխանելու: Դեռ երբ պիտի գրեի Ձեզ, մինչև անգամ մոռացել եմ ուղարկել Ձեզ իմ վեպը: Ներողամիտ եղեք, աղաչում եմ, վերջին երկու տարին ինձ վիճակված է այսպիսի նախաբանով սկսել իմ բոլոր նամակները, որ գրում եմ բարեկամներին:

Նախ և առաջ Ձեր թղթակցության¹ մասին: Չարաչար սխալվում եք, կարծելով թե կրճատման հեղինակը կառող Լե լինել խմբագրությունը. այդպիսի դեր մենք չենք կատարում Ձեր զրկածքների վերաբերմամբ և, մտածեցեք, մե՞նք պիտի քաշվեինք փողավոր անասունների կաշին ծակոտելուց: Ի՞նչ. «Անկախ պատճառներ» — ահա թե ով էր կրճատողն էլ, այլանդակողն էլ, և եթե դուք այս երկու ստերեոտիպ բառը շտեմաք խմբագրական պատասխանի մեջ, պատճառն այն է, որ դրանց պրածնեին էլ շատ դժվարացել է: Եթե ես փորձեի նկարագրել «անկախ պատճառներին» զրույթներ մեզանում, հաղիվ թե ավելի կոնկրետ փաստ գտնեի, ահա տեսեք Ձեր այդ փաստը, երևակայեցեք որ հարյուրավոր այդպիսիներն են տեղի ունենում և կհասկանաք թե ոչ իսկությունը, գոնե իսկության նմանությունը...

Ստացա նազարյանցի նամակները. չեմ կարող արտահայտել այն ուրախությունը, որ պատճառեց ինձ այդ սիրալիր աջակցությունը: Անշափ շնորհակալ եմ այ. Շահազիզից, այժմ ես մեծ հույս ունեմ նրա օգնության վրա. դեռ, ճիշտն ասած, երբեք ուրիշ կերպ էլ չեմ երևակայել ազնիվ ընկերին ազնիվ հեղինակին: Նամակները եկող շաբաթ արտագրել կտամ և կուղարկեմ Ձեզ: Շատ հետաքրքրական են նրանք, վերաբերում են այնպիսի շրջանի, որի մասին ես դեռ համարյա ոչ մի տեղեկություն չեմ ձեռք բերել: Եվ ինչպե՞ս ձեռք բերել: Այստեղ կա գրավաճառ Զաքարյա Գրիգորյանցը, որ նազարյանցի տեսչության ժամանակ հոգաբարձու և ուսուցիչ է եղել Ներսիսյան դպրոցում, դիմեցի նրան, բայց նա ոչինչ չգիտե...

Ես դեռ չարունակում եմ նյութերի ուսումնասիրությունը և մի երկու ամսից հետո կարող կլինեմ գործի սկիզբը դնել: Պ. Փանյանցին² էլ կդիմեմ: Ձեր խոստացածները, եթե աջողվին, շատ երջանիկ կլինեն:

Մի քանի օրից հետո, եթե «անկախ պատճառները» թող տան, ես կտպագրեմ «Գրական դեմքերի» երկրորդ հատվածը — ևս Աբովյան: Երրորդ դեմք — Նալբանդյանի — համար բավական կլինի, կարծում եմ, տպագրված նյութեր: Բայց չորրորդը — Ռ. Պատկանյան, ինձ այնքան ծանոթ չէ իր կյանքով: Եվ ահա, սիրելի բարեկամ, ես վստահանում եմ մի ուրիշ հանձնարարությամբ ներդրություն պատճառել Ձեզ, թեև, հավատացե՛ք, շատ ծանր է այսքան նեղացնել մի հիվանդ մարդուն: Բանն այն է, որ բանաստեղծի որդին մեր խմբագրատանը ասում էր՝ թե կենսագրական նյութեր է հավաքում և արդեն բավական բան ունի: Պատահած ժամանակ խնդրում եմ ասացե՛ք նրան, որ ինձ նյութեր տա: Շատ մանրամասնություններ չեմ պահանջում. գիտե՛ք որ «Գրական դեմքերը» կենսագրություններ չեն, գրական գործչի դեմքը գծագրողը նրա զորավածքներն են ղլխավորապես. բայց գրողը պիտի առաջնորդող թեև ունենա նաև կյանքի փաստերից:

Ձեր նամակից իմացա, որ Դուք հիվանդ եք. ավելորդ է ասել, թե որքան ցավ պատճառեց ինձ այդ տխուր հանգամանքը. հայոց գրական անապատը տեսնողը չէ կարող չցավել: Բայց ես հավատում եմ, որ այդ փոքրիկ գրականությունը ունի մի հովանավոր աստվածություն և նա կխնամե Ձեզ: Այդպիսի աստվածություն կհանդիսանա Ձեզ համար հայրենի բնությունը և Դուք, կարծում եմ, անապահովության պատճառով չպիտի թողնեք Կովկաս գալու միտքը. նյութականի մասին շատ մի մտածեք, առողջության հարցը ավելի կարևոր է: Կկամենայի հաղորդել Ձեզ թե ինչու «Մշակի» կողմից հեռագիր չուղարկվեց այ. Վեսելովսկու հոբելյանին³: Շաբաթ օր էր երբ մեզ մոտ աշխատություն չէ լինում այդ օրը ես տանը մնացի, բայց հիշեցրել էի այ. Քալանթարին⁴, որ հեռագիր պետք է ուղարկել: Դժբախտաբար այ. Քալանթարը այդ օրը Ախալքալաքի նպաստամոտությամբ կոմիտեի գործերով այնքան այս ու այն կողմ է վազում, որ մոռանում է: Մյուս օրը ես իմացա, որ հեռագիր չէ ուղարկվել, բայց այլևս ուշ էր: Շատ ցավալի է, որ այդպես պատահեց, մեր խմբագրությունը, առհասարակ, մեծ համակրությամբ է վերաբերվում այ. Վեսելովսկուն...

3.

Մարտի 18, 1909
Թիֆլիս

Ձեր ուղարկած նյութերը ստացել եմ ամենամեծ շնորհակալությամբ: Անշալի շնորհակալ եմ այ. Շահադիզից նրա սիրալիր աջակցության համար, նամակները արտագրում եմ և այս շաբաթ կվերադարձնեմ իրեն: Շնորհակալ եմ նաև այ. Հովհաննիսյանից¹, որ ներդրություն է հանձն առել արտավրելու նազարյանցի Формуляр-ը: Այժմ ես համոզված եմ, որ շնորհիվ մեր ընդհանուրիս բարերար գրական գործչի խոշոր երախտիքը հարգողների աջակցության ինձ կաջողվի կազմել մի բավարար և ընդարձակ կենսագրություն: Ես սկսել եմ գործը. օգտվելով առայժմ ինձ մոտ եղած նյութերից, պակասություններ շատ կան, բայց ես առաջ եմ գնում, նշանակելով պակասավոր տեղերը, որպեսզի հետո լրացնեմ:

Պ. Վեսելովսկու նոր գործից² մի օրինակ ստացել եմ, շատ շնորհակալ եմ, ես ինքս, ինքնաբերաբար հայտարարություն տվի «Մշակի» մեջ այդ գրքի մասին, երևի նկատած կ'իլնեք, կարծում եմ, որ ռուսերեն հայտարարությունն էլ բավական է, քանի որ գիրքը ռուսերեն է և նրա գնողները պիտի լինեն ռուսերեն խմբագրողները, մի քանի տեղերից հարցնում են մեզ, թե ինչպես ձեռք բերել այդ գիրքը, լավ կ'իլնեք եթե շուտ ուղարկեիք այստեղի գրավաճառներին: Մտադիր եմ խոսել այդ հետաքրքրական ժողովածուի մասին, բայց չգիտեմ կ'արդյանա՞մ կատարել մտադրությունս թե ոչ, իմ կամքը չէ ղեկավարում ինձ այս գործի մեջ, այլ լրագրական մանր մունր գործերը (լուրեր, թղթակցություններ), որոնք աշխատեցնում են ինձ առավոտից ժամի 10-ից մինչև 2 և 6-ից մինչև 10-ը: Եվ այսպես շաբաթը վեց օր:

4.

Հունիսի 11, 1900

Թիֆլիս

Ստացա Ձեր նամակը և դարձադա, գրում եք թե Ձեր նամակները չեն տպվում և մինչև անգամ հարցնում եք պատճառը, մինչդեռ բոլորը տպվել են¹, իսկ վերջինը հերթի է սպասում: Երևի «Մշակը» շատ ուշ է հասնում Ձեզ կամ դուք չեք տեսել բոլոր համարները, այլապես չեմ կարողանում հասկանալ՝ թե ինչու: Ձեզ թվում է, որ Ձեր նամակները չեն տպագրվել:

Նորություններ եք հարցնում մեր պրական աշխարհից: Բայց դա մի աշխարհ է, որ, առհասարակ, նորություններ չէ սիրում, հետևաբար ինչ կարող եմ գրել Ձեզ բացի գանգատներից: Միակ նորությունը, այո, «Մուրճի» ծախվելն է: Դա փաստ է, արդեն, ամեն ինչ վերջացած է, նոր սեփականատերը սպասում է սանկցիայի՝ կառավարության կողմից: Գնողը Կոստանտին Կրասիլնիկյանն է, որի եղբորը՝ Արսենին, տուր ճանաչում եք: Իմ վաղեմի ընկերն է, բարի ցանկություններով տոգորված մի երիտասարդ, բայց, զժբախտաբար, բավական թույլ, տատանվող և անվճռակուն: Ահագին գումար է տվել (25 հազար) բայց խմբագրություն դեռ չէ կազմել: Ուզում է առանց ինձ ունի չանել և ես համաձայնություն եմ տվել, որ բոլոր ազատ ժամերս նվիրեմ նրան «Մշակից» չհեռանալով: Ուզում է գլխավոր աշխատակից և խմբագրող հրավիրել Լևոն Սարգսյանին², բայց դեռ վերջնականապես չէ տվյալնալորվել նրա հետ: Այսպիսի կազմակերպումը խմբագրությունը, որքան ինձ թվում է, բավական լավ կ'իլնի և ես գիտեմ, որ մեծ մեջ եղած ուժերից լավագույնները կաշխատակցան նոր «Մուրճին»: Բայց, ինչպես ասացի, Կրասիլնիկյանի վարանոտ ընտրությունը (խնդիրը լոկ դրամական հանգամանք ունի) չէ թույլ տալիս առ այժմ մի բան ասել հաստատ կերպով: Մինչև երկու ամիս ամեն ինչ կ'պարզվի...

5

Սեպտեմբերի 24, 1900

Թիֆլիս

Օգոստոսի 15-ից մի ամիս ժամանակով գնացել էի հայրենիքս՝ Շուշի: Շատ ժամանակ էլ չէ որ վերադարձել եմ, ստացա Ձեր նամակը և այժմ պատասխանում եմ:

Ձեր հողավածը անկարելի եղավ տպագրել մեզանից անկախ պատճառներով. արդեն մինչև այդ հողավածը ստանալը քննիչը բռնել էր մի ուրիշ համանման հողաված, Ձերը, որ դրանից ավելի տաք ոճով էր գրված, հո բոլորովին անկարելի էր անցկացնել: Առհասարակ, դուք պետք է նկատած լինեք, որ այժմ այդ տեսակ գրվածքների ժամանակ չէ, սանձը շատ սաստիկ են քաշում, և մենք, այստեղ գրողներս, ստիպված ենք լինել մեղմ, տափակ, անգույն: Ուրիշ կերպով բան չի գլուխ գա:

Համաձայն Ձեր դրածի՝ հողավածը հետ եմ ուղարկում Ձեզ:

Հարցնում եք «Մուրճի» մասին: Հրատարակիչ Կ. Կրասիլնիկյանը արտասահմանում է, մինչև այժմ դեռ չէ վերադարձել, թեպետ իր ասելով՝ սեպտեմբերի 15-ից այստեղ պիտի լինեք: Ոչինչ կարգադրություն չէ արել և ես մինչև այժմ չգիտեմ թե ե՞րբ են մտադիր սկսել հրատարակությունը: Դեռ ոչ ժամանակավոր, ոչ մշտական խմբագրի մասին էլ ոչինչ հայտնի չէ: Մի խոսքով այս բոլորին կատարյալ անհայտություն է...

Անշուի ցավում եմ, որ Ձեր հիվանդությունը չէ թույլ տալիս Ձեզ շարունակել «Խրիմի ափերից»՝ նամակները, նրանք հետաքրքրությամբ էին կարդացվում, բնության նկարագրությունները, տուրիստի տպավորությունները միշտ թարմացնող ազդեցություն են գործել և դրանք հարկավոր են մանավանդ այժմ, մեր նյութապաշտ դարում, երբ ամեն ինչ հաշիվ է, չոր, անհոգի հաշիվ: Ցանկալի կլինեք, որ Դուք շարունակեիք, երբ Ձեր առողջական դրությունը թույլ կտա:

6

Մարտի 6, 1902

Թիֆլիս

Մի դարմանաք, խնդրում եմ, որ Ձեր նամակին չկարողացա պատասխանել ժամանակին: Զբաղված եմ օր ու գիշեր, աշխատում եմ այս տարի հրատարակել իմ խոստացած կենսագրությունները: Դրանք փոքրիկ աշխատություններ չեն և եթե դրամականի կողմից արգելքներ չհանդիպեն, հուլիսով եմ, որ կկատարեմ խոստումս: Այս բոլորիս ես վերջացնելու վրա եմ՝ տաղարյանցի կենսագրությունը և ամեն անգամ շնորհակալությամբ հիշում եմ, որ Դուք եք ինձ օգնել աշխատելու:

Ձեր հողավածների վերաբերմամբ ոչինչ թյուրիմացություն չպետք է լինի, ինչ որ չէ տպվում, իմացեք որ պատճառը «անկախ» է: Նալբանդյանի մասին ոչինչ չեն թույլ տալիս գրել: Ձեր հողավածը կրճատեցի, որսկեսգի միանգամայն «անմեղ» դարձնեմ, բայց էլի բռնվեց, ուրիշ արգելք չկա, կրկնում եմ, և Դուք շուր եք զանազան ենթադրություններ անում: Միայն Ձեր հողավածը չէ այդպիսի վիճակի ենթարկվել. բազմաթիվ այլ գրվածքներ էլ ոչնչացան...: Առ այժմ այսքան: Հուլիսով եմ, որ էլի կգրեմ:

7

Մայիսի 9, 1902

Թիֆլիս

Ձեր վերջին նամակը ինձ շատ մեծ ուրախություն պատճառեց: Առանց իմ ասելու էլ Դուք, իհարկե, իմացած կլինեք թե որքան պիտի ոգևորեք ինձ մեր պատկառելի բանաստեղծի առանձին ուշադրության ցույցը դեպի ինձ: Ավել-

լորդ է նույնպես ասել, թե որքան էս սիրտ առա այդ ինձ համար վերին աստիճանի թանկագին ցույցիդ: Կասեմ անկեղծաբար, որ Ձեր նամակը ստացած օրը էս մոռացա մի պրական աշխատավորի վրա ծանրացած մույլ հանդամանքները, այն զրկանքները, որ էս տարել եմ շարունակ և այսօր էլ տանում եմ: Ես լիովին վարձատրված եմ այժմ, ինձ համար ավելի ևս պարզվեց, որ տոկուն համառ աշխատանքը չի կորչի երբեք: Ինձ համար, իհարկե, այնքան նյութական օգնությունը չունի նշանակություն. զիտավոյր ասն է, որ մեր նորագույն գրականության մեջ այնքան սիրելի անուն ունեցող հեղինակն է ինձ օգնում իբրև նշան դեպի ինձ ունեցած համակրանքի: Շատ շնորհակալ եմ, հարգելի բարեկամ, որ շտապել էիք հայտնելու ինձ այդ ուրախալից ոգևորիչ լուրը: Ես արդեն մանրամասն նամակ գրեցի պ. Շահադիզի:

Մեր գրական նորություններից մեկը անշուշտ հետաքրքրական կլինի Ձեզ համար: «Մուրճի» հրատարակիչը Բաքվից նամակ է գրել ինձ և Սարգսյանին. թե այսուհետև չէ կարող մեր ուժերի նույնիսկ կեսը տալ:

Այս հանգամանքը պատճառ կդառնա, որ մենք հեռանանք իմբացրությունից: Ինքս շատ ուրախ եմ, որ այսպես կլինի, որովհետև անկարող եմ պատմել Ձեզ այն բոլոր տանջանքները, որ կրեցինք... ամբողջ տարի ու կես...

8

Հունիսի 9, 1902

Թիֆլիս

Պ. Շահադիզը գրում է, որ Ձեզ է հանձնել կլիշենների դործը: Ինքը այժմ ևրևի, այդտեղ չէ: Ուստի խնդրում եմ Ձեզ, որ շտապեցնեք կլիշե պատրաստողին շուտ ուղարկել: Հարկավոր է, որ դրանց նայած՝ էս կարգադրեմ մյուս կլիշենների դործը, որպեսզի ապագրությունը կանգ չառնե: Եթե այդ կլիշենները առանձնապես լավ պատրաստված լինեն, այն ժամանակ էս մյուսները այստեղ չեմ պատրաստել տա, ուր գիտեն միայն: չարչարել և փշաջներ, այլ խնդրում եմ Ձեզ: որ նույնպես պատվիրեք այդտեղ: Միայն չդիտեմ, թե ինչ ժամանակում կարող էն պատրաստել: Արտասահմանում 5—10 ժամվա մեջ պատրաստում են կլիշե, մեզ մոտ, Թիֆլիսում, մի շաբաթից պակաս չէ քաշում, չդիտեմ, Մոսկվան ինչ միջակ տեղ է բռնում արտասահմանի և մեր Ասիայի մեջ: Կխնդրեի Ձեզանից մի փոքրիկ տեղեկություն այս մասին:

...«Մուրճի» գործը դեռ նույն անկերպարան ղրություն մեջ է: Հայտնել ենք, որ հեռանում ենք, հունիսի մեկից չենք մասնակցում, բայց բանը դրանով էլ չէ վերջանում. էլի ուղում է, որ մենք շարունակենք: Մի օր մի բան է ասում, մյուս օրը մի այլ բան. տանջանք, կատարյալ տանջանք. Որքան տանջվեցանք տարի ու կեսի ընթացքում...

Երազարյանցի կենսագրության համար բացված բաժանորդագրությունը առայժմ շատ լավ է գնում: Շնորհիվ պ. Շահադիզի ևս կարողացա այնքան էժան գին նշանակել և հույս ունեմ որ գիրքերը շատ կտարածվեն: Բանը, իհարկե, միայն էժանության մեջ չէ. նազարյանցի անունն էլ մի մեծ դեր է խաղում: Այդ անունը — էս այժմ ավելի ևս համոզվեցի — նվիրական է մեր ժողովրդի մեջ:

9

Հուլիսի 4, 1902

Քիֆլիս

...կլիշեները ստացել եմ, շնորհակալ եմ, պակասությունը այն է միայն, որ մեծ են, բայց ես վճռեցի դրանցով բավականանալ, իսկ նոր կլիշեներ ես պատվիրեցի այստեղ, դեռ, իհարկե, այստեղի և այդտեղի դործերը չէ էլ կարելի համեմատել: Եթե հարկավոր լինեն կլիշեներ Գ. Արծրունու կենսագրության համար, ես ինձ թույլ կտամ դիմել Ձեզ, որ պատվիրեք նույն ֆիրմային:

Առ այժմ շտապում եմ վերջացնել Նազարյանցի կենսագրությունը. առաջին հատորը վերջացավ, շուտով կստանաք, երկրորդը տպվում է: Բաժանորդագրությունը այնպես լավ է գնում, որ չեմ կարող շասել, թե դա մի անօրինակ տպողություն է, մի ամսվա ընթացքում բաժանորդների թիվը մոտ 600-ի հասավ...

10

Սեպտեմբերի 3, 1902

Քիֆլիս

Ձեր վերջին նամակը դարձյալ Շահ-Նազարյանցի մասին էր: Պատասխանելու բան չունենք, սպասում էի թե ինչ պիտի գրեք...

Ստեփանոս Նազարյանցի առաջին հատորը Ձեզ չեմ ուղարկել: Մի դատապարտեք ինձ, հարգելի բարեկամ, մեկնակ մաքր, թուրրովին մենակ, այսօրվան դործեր, 600—700 բաժանորդներ... Զարմանալի չպիտի լինի, եթե եղբորս էլ մոռանամ, եթե իհարկե, եղբայր ունենայի: Այժմ ահա ուղարկում եմ երկու հատորը միասին. Ձեզ համար այդպես ավելի լավ պիտի լինի: Գործի մասին մի ամբողջական հասկացողություն կկազմեք: Տեսեք ինչ եմ կարողացել անել Ձեր սիրալիր աջակցությամբ և մանավանդ մեր սիրելի Շահ-Աղիզի անսահման բարեսրտության շնորհիվ: Գիրքը, հավատացած եմ, կուպակի մինչև այս տարվա վերջը, և այդ այն պատճառով, որ գինը մատչելի է ամենքին: Եվ եթե չլինեք Շահ-Աղիզը, կարող էի ես, մի առթառ դրող, այսպիսի պիլք հրատարակել այդ գնով: Ուրախության չափ չկա, ուրախ եմ, որ Նազարյանցն է այդպես լավ և արագ տարածվում մեր հասարակության մեջ:

Ձեր տպավորությունները անշուշտ կհաղորդեք ինձ անկեղծաբար:

Այժմ Ձեզ մի մեծ հանձնարարություն: Մինչև ամսիս վերջը տպագրության կհանձնեմ Արծրունու կենսագրության առաջին հատորը՝ նամակիս հետ ուղարկում եմ յոթ հատ լուսանկար և Արծրունու երկու գրությունները: Շատ խնդրում եմ, ստանալուն պես տաք Շերեր և Հաբեշտ դործարանին՝ կլիշեներ պատրաստելու համար: Այստեղ փչացնում են, հույս ունեմ, որ այդտեղ շատ լավ պատրաստել կտաք: Գնի մասին ոչինչ ասելիք չունիմ, միայն լավ պատրաստի՛ն և շուտ: Գիրքը չպետք է փոփոխել, ընդհակառակն, մի հատ մեծ լուսանկարը, որ ներկայացնում է Անդրեաս և Գրիգոր Արծրունիներին, պետք է փոքրացնել, մյուսների նման: Կամ գոնե դրանցից մի քիչ ավելի մեծ շինել: Գրիգոր Արծրունու գրություններից չպետք է հանել կլիշե (ֆակսիմիլե), դիրքը իհարկե անփոփոխ պիտի մնա:

Լուսանկարները հանել եմ Արծրունու ակբոմից, խնդրեմ դարձյալ ետ ուղարկեք որպեսզի տեղը դնեմ:

Երեք շրից հետո ես կուղարկեմ Ձեզ դարձյալ երեք լուսանկար, խնդրում եմ դրանց էլ, ստանալուն պես, հանձնեք կլիշե պատրաստելու:

Գլխավորն այն է, որ շուտ ստանամ, որպեսզի կարողանամ ձեռագրի հետ միասին ներկայացնել ցենզուրային:

Փողի վճարը — ինչպես կկամենաք: Ուղում են, թողեք վերադիր վճարով ուղարկեն, եթե ոչ կարող եմ հենց իսկույն ուղարկել: Եթե անհրաժեշտություն լինի, խնդրեմ հեռագրեցեք, կփոխադրեմ փողը: Մախս չխնայեք. միայն ինչ որ ծր շուտ գլուխ գա:

Կլիշեները լինելու են ցինկի վրա:

Այս դեռ սկիզբն է, հարգելի բարեկամ: Ես վճել եմ Ձեզ շատ նեղություններ տալ: Շնորհակալությունները մի անգամից:

11

Դեկտեմբերի 24, 1902
Քիֆիս

Վաղուց է նամակ չեք գրում, բայց ինչպես տեսնում եք, ես չեմ հուսահատվում Ձեր լուսությունից: Ահա, նորից գլխացավանք եմ ուղարկում Ձեզ: Ինչ անեմ, մեղավորը Դուք եք, այնպիսի դեղեցիկ կլիշեներ. էիք պատրաստել ասվել ինձ համար, որ որքան էլ կամենամ, չեմ կարող այս անգամ էլ չձանձրացնել իմ հանձնարարությամբ: Եղեք բարի դեպի ինձ, այն լուսանկարներն էլ հանձնեցեք կլիշեներ շինելու ճիշտ այնպես, ինչպես արդեն գիտեք: Ամեն մեկի մեծությունը միևնույնը պիտի լինի՝ հետևյալ բացառությամբ. «և կարտոնի վրա հղած լուսանկարը պետք է մի քիչ փոքրացնել, իսկ Արծրունու այն պատկերը, որի ետևում դրել եմ Մ. տառը, պետք է մի քիչ մեծացնել (այդ պատկերը սպիտակ ժիլետով է): Մեծ և փոքր ասելով, պետք է նկատի ունենալ իմ գրքի մի երեսը: Այսօր ուղարկեցի Ձեզ մի հատ «Գրիգոր Արծրունի», նրա համեմատ թող հարմարեցնեն պատկերների մեծությունը, ի նկատի ունենալով, որ Արծրունու պատկերը պետք է տպագրվի առանձին թղթի վրա և դրվի գրքի սկզբում, մինչդեռ բոլոր մյուսները պիտի բնագրի մեջ մտնեն:

Մի քանի պատկերներ (Բաֆֆի, Սունդուկյանց, Քալանթար, Արծրունի) ունեն իրանց տակ ինքնագիր ստորագրություններ. կխնդրեի որ դրանք պահպանվեին կլիշեների վրա:

Եթե մեծ դժվարություններ չկան, ես կկամենայի, որ բոլոր պատկերները սպիտակ ֆոն ունենային, ինչպես օրինակ Համբարձում Առաքելյանի՝ պատկերը, այնպես ասվելի լավ է:

Ժամանակը դարձյալ կարճ է, երկրորդ հատորը արդեն մամուլի սալ է և պետք է շտապեցնել գործարանը, որ շուտ պատրաստեն կլիշեները: Ինչպես անցյալ անգամ, խնդրում եմ հեռագրեցեք, որպեսզի փողը փոխադրեմ իսկույն: Լուսանկարները. իհարկե, հետ կուղարկեք:

Գրում եմ այս նամակը սաստիկ կասկածելով թե Դուք արդյոք Մոսկվա-լոմն եք այժմ: Եկատերինոգորից լուր ունենք, որ Դուք այնտեղ եք նշել, չդիտեմ նորից վերադարձել եք Մոսկվա, թե ոչ: Եթե շուտով Ձեզանից տեղեկություն չստանամ, պիտի դիմեմ պ. Շահադիզին:

նորից և նորից ներողություն խնդրելով Ձեզ պատճառած նեղության համար, մնում եմ այն ախորժելի սպասողության մեջ, որ Դուք այդտեղ եք և այս դործն էլ առաջինի պես կարգադրելու համար բարի կլինեք, ինչպես միշտ:

12

Մարտի 30, 1903

Թիֆլիս

Երկար ժամանակ է, ոչ ոքին նամակ գրել չեմ կարողանում: Ես արդեն գրել էի Ձեզ Եկատերինոգարում, որ զբաղված եմ մի գործով: Անշուշտ, Ձեզ համար հետաքրքրական կլինի իմանալ թե ինչ է դա: «Գեղունի» համար ես պատրաստեցի և այժմ վերջացնելու վրա եմ մի ընդարձակ գրական-քննական տեսություն «մուսահայոց գրականությունը»՝ վերնագրով: Կես դարի մի պատմություն է, 1850-ից մինչև մեր օրերը: Ես համարձակություն չունեմ անվանելու այդ աշխատությունը մեր նորագույն գրականության պատմություն, բայց ապահով կարող եմ լինել, որ համեմատյան դեպք դա մի տեսություն է, որի մեջ մեր գրականության ամբողջ պատկերն է տրված որքան, իհարկե, ես եմ կարողացել անել այդ, առանց կողմնակի որևէ օգնության, իմ սեփական ուժերով: Ահագին քանակությամբ գրքեր կարդացի— բոլոր բանաստեղծությունները, թատերադրությունները, վեպերը. հիշողությանս վրա ոչ մի հույս չգրի, վերցրի նորից կարդացի այն ինչ և ասացի այն, ինչ թույլատրում են ինձ իմ դատողությունը, հայացքներս: Աշխատությունս առանձին դրքով կարտատպվի և ես ժամանակին մի հատ կուղարկեմ Ձեզ՝ դատելու: Գիտեմ որ ազմուկ պիտի հանե: Մեզանում ունցրած մեծություններ շատ կան, բայց պետք է որ ճշմարտությունը (զոհե այն ինչպես էս եմ հասկանում) մի անգամ խոսե հրապարակում: Պարտք եմ համարել խիստ լինել, այդ խստությունը ամենքի համար է, Բաֆֆին էլ չեմ խնայել, բայց, իհարկե, արժանի մեծարանքներ էլ եմ մատուցել այնտեղ, ուր հարկավոր է: Ես Ձեզ պետք է անկեղծորեն խոստովանեմ. որ ինձ վրա առհասարակ վատ տպավորություն են թողնում այն հողվածները, որոնք վերջին տարիներս լույս են տեսնում... մեր հեղինակների մասին: Մի գլուխ ներբողներ. ոչինչ պակասություն չկա: Սա դրժբախտություն կարող է դառնալ, սա միայն սպանել կարող է ստեղծագործությունը, առաջագիմությունը: Իմ գործի մեջ ես աշխատել եմ շոտլանդ և ոչ մի պակասություն:

Խիստ եմ եղել մանավանդ զնայի մեր նոր բանաստեղծները: Ամենից շատ Ձեզ հավանեցի, երբ նորից և նորից կարդացի, համեմատություններ արի, զողափարտականություն որոնեցի: Այստեղ ես, իհարկե, չեմ կարող պատմել թե ինչ առաջնորդող սկզբունքներ ունեի այդ աշխատությունը գրելիս: Կասեմ միայն այսքանը. մի փոքրիկ ազդ շրջապատված տխուր հանգամանքներով. այդ ազդի ամբողջ ներքին ուժը, հոգին, ամբողջ նեցուկը գրականությունը պիտի լինի: Եվ ահա այս տեսակետից քննում եմ հեղինակներին: Ձեր պատկերն էլ կլինի աշխատությանս մեջ:

Ի դեպ, այստեղ լուսանկար Տեր Ղևոնդյանը խնդրեց ինձ, որ բերեի տամ Ձեր պատկերը, ուղղներ, ասում է, շատ կան, իսկ այստեղ չեմ գտնում Ձեր լուսանկարը, որ վերցնե նրանից: Խնդրեմ ուղարկեցեք ինձ: Շուտով էս էլ կունենամ իմ նկարներից և ինքս էլ Ձեզ կուղարկեմ:

Շահագործողը, այո, ինձ մի երկու բան գրել է Ձեր մեջ տեղի ունեցած ընդհարման մասին, բայց ծանոթ չլինելով մանրամասնություններին, ես չկարողացա մի որոշ կարծիք կազմել։ Ես գրեցի նրան, որ Ձեր վերաբերմամբ համեմատյանգեպս թյուրիմացություն եղել էր, լավ կլինի որ վերանա։ այդ անախորժ թյուրիմացությունը։ Ինձամբ ինձ համար շատ ուրախալի կլինի, եթե Մոսկվայի իմ երկու ազնիվ բարեկամները առաջվա պես բարեկամ լինին իրար հետ։ Ոչինչ անհարմարություն չկա, որ Գուր Ձեր հողվածները ինձ եք ուղարկում։ Խմբագրության ուղղած նամակներն էլ համարյա միշտ իմ ձեռքումն են լինում։

Մոսկվայի ուսանողները ուզում են մի ժողովածու պատրաստել նվիրված Ահարոնյանի անվան։ Չափազանցություն չէ՞ դա։ Ահարոնյանը իմ ամենամոտիկ ընկերն է, ես նրան սիրում եմ, բայց բարեկամ, չափ սանձելը միշտ լավ բան է։ Ահարոնյանը ինձ դեռ բոլորովին չէ բավականացնում իբրև վիպագրող։ Ունի տաղանդ, ունի բանաստեղծական տեմպերամենտ, բայց դեռ որտե՞ղ է։ Իմ կարծիքով, դեռ կան մի շարք անուններ, որոնք սպասում են այդպիսի պատվի։ Գամառ Քատիսյա, Րաֆֆի, Ալիշան, Պեշկովաշևիլան և այլն։

Առայժմ դեռ հանձնարարություն չունեմ դիպի Ձեզ. «Արծրունի» երկրորդ հատորը դեռ չէ վերջացել, դեռ ապում են՝ ինձ տանջելով, չարչարելով, խաշելով։— Մի կամ երկու ամսից կպատրաստեմ երրորդ հատորը. ա՛յ ա՛յն ժամանակ էլ կգրեմ Ձեզ, թե ինչ եմ ուզում։

13.

Մարտի 1, 1904

Քիֆիս

Չգիտեմ ինչպես սկսեմ նամակս։ Պատմել Ձեզ բոլորը չափազանց երկար կլինի։ Բայց ո՞ր ժամանակից է, որ Ձեզ նամակ չեմ գրում, կկամենայի արդարանալ, կկամենայի ցույց տալ, որ հանգամանքներն են մեղավոր, որ Ձեզ հետ նամակագրություն ունենալը և՛ քաղցր, և՛ չափազանց ախորժելի է ինձ համար։ Սակայն իմ արդարացուցիչ հանգամանքները այնքան երկար են։ Ինչպես նկարագրեմ իմ հիվանդությունը, որի պատճառով ստիպված եղա հանքային ջրերը գնալ, բայց այսօր էլ դեռ ինձ տանջում է, իսկ մի քանի ամիս առաջ ուղղակի սպառնում էր կյանքիս։ Պարապել առաջվա պես ալլևս անհնար է. դարձել ինձ համար, թեև առաջվա պես ես իմ ամբողջ մխիթարությունը, ամբողջ ուրախությունը միայն զրբերի մեջ եմ գտնում և այս մեծ քաղաքում ճգնաժամի պես եմ ապրում, առանց լայն ծանոթությունների, առանց տյառեղայնառել լինելու. նույնիսկ առանց ընկերների։— Տեսեք ինչքան եմ աչքաթող արել գործերս, որ դուք հիմա եք հիշեցնում, թե «Արծրունի» II հատ. Ձեզ չեմ ուղարկել։ Շատ և շատ այդպիսի բաներ եմ մոռացել, բարեկամ. շատերից եմ զանգատներ, արտունջներ ստացել։ Բայց ինչ անեմ։ Քույրս անպամ ինձունից մի տեղեկություն ստանալու համար դիմել էր կողմնակի հարգիանց։ Տեսնո՞ւմ եք որքան բան կարող էի Ձեզ պատմել։

Բայց մի պատճառ էլ կկամենայի հայտնել Ձեզ։ Այս բոլորին էլ սեղանիս վրա ընկած է այն նամակը, որ գրել եմ Ձեզ դեռ փետրվարի 15-ին։ Գրել եմ և չեմ ուղարկել, որովհետև Ձեր հասցեն չէի իմանում։ Տեղեկացա, որ «Սշակը» Ձեզ առաքվում է հին հասցեով, թեև, հիշում եմ, Գուր հայտնել եք որիշ հասցե։

15 Հանդես, N 2

Վերջապես ահա այժմ գրում եմ և հույս ունեմ, որ այսուհետև այլևս երկար արգարանալու առիթներ չեմ ունենա և կգրեմ Ձեզ հաճախ:— Ռոմվհետև այսքան երկար ժամանակ է անել իմ լուսնյունը, ես այժմ չեմ խոսում այն հարցերի մասին, որոնք եղել են Ձեր նամակներում: Ինչպե՞ս խոսել, երբ այդ նամակներից մի քանիսը շորս-հինգ ամիս առաջ են եղել ինձ գրած: Ես կըստպանեմ, թե ինչ հարցեր էլ կտաք Դուք այսուհետև և կգրեմ պատասխանները:

Իմ խորին և բուռն շնորհակալությունը Ձեր եղբայրական զգացմունքների համար: Ամենևին չեմ կարողանում բացատրել թե ինչպես է կազմվել «տխուր լուրը»¹ իմ մասին: Նա սկսվել է, իհարկե այստեղ՝ և ես լսում էի այդպիսի բան, երբ նոր նոր էի սկսել դուրս գալ տանից՝ հիվանդություններիցս հետո: Բայց ինչպես է տարածվել: Գրել էին Վիեննայից, Պարիսից և անհամար:— Ինչե՞նց, սխալ է, և ես ուրախ եմ, որ գոնե առ այժմ այդպես է: Ես, այո, զրկված չեմ օդից, բայց ներկա ժամանակում չեմ կարծում, որ զրոզի դրությունից ավելի աննախանձելի, ավելի ցավազար դրություն լինի: Ինչքան բաներ կա ասելու, հարգելի բարեկամ: Բայց ինչպես ասեմ Ձեզ:

Այո, մեղավոր եմ, խոստմանս հակառակ, չեմ ուղարկել Ձեզ լուսանկարս: Այդ էլ բնորոշում եմ իմ բազմաթիվ մեղքերի մեջ: Պատվիրել եմ Տեր Ղևոնդյանին պատրաստել: Կուղարկեմ զրքի հետ (II հատոր): Շատ շնորհակալ եմ, որ հիշեցրիք: Ուրիշ պատճառ չէ կարող լինել, բացի այն դրությունից, որի մեջ է դրել ինձ հիվանդությունս:

Երեսակայեցեք շատ քիչ են այն օրերը, երբ ես ցավ չեմ զգում: Համարյա ամեն օր կրկնվում են, մեղմանում: Այս դրության մեջ կարելի է բան հիշել և հիշածը անմիջապես կատարել:

Ինչ կարողացել եմ անել այս վերջին 4 ամիսների ընթացքում Ս. Մեսրոպի կենսագրությունն է: Այսօր գրում եմ վերջին երեսները, մարտի 9-ին անպատճառ կուղարկեմ այ. հալաթյանին: Դուրս է գալիս բովանդակի մեծ լրան— 350 էրևս պոստի փոքրագիր թղթի մեծությամբ: Ոչինչ, իհարկե, ասել չեմ կարող. կկարգաք կաեսներ: Այս րոպեին, երբ մի քանի էրևս է մնում վերջացնելու, ես պզտիկ եմ որ մի ծանր բեռից թեթևանում եմ, աշխատանք շատ և շատ եմ գործադրել և ինձ թվում է, թե կարողացել եմ նոր լուսարանություն մտցնել հայոց հին պատմության մեջ, մի քանի գլխավոր կետերի վերաբերմամբ: Ինձ համար էլ շատ ուրախալի կլինի, եթե այդ աշխատությունը դուք հնարավորություն ունենաք հրատարակելու: Ես ինքս հաղիվ թե կարողանամ երբեք հրատարակել: Նախ, որ միջոց չունեմ, երկրորդ՝ բոլորովին ժամանակ և կարողություն չունիմ իմ գիրքը այնպես վաճառելու, որ ինձ էլ մի բան մնա: Գանդատվել չեմ կարող— իմ գրքերը շատ լավ են ծախվում: Այժմ իմ բոլոր հրատարակությունները (բացի «Արծրունի») սպասված են: Բայց դեռ ուղեն ուղարկել, հաշիվ պահել չեմ կարողանում. այնպես որ վերջիվերջո օգուտ ստանում են զրավահանները, իսկ ես — շատ չեչին:

Ձեր ձեռնարկած հրատարակությունների մասին ամառը ես շատ եմ խոսել այ. հալաթյանի հետ: Ցանկալի կլինի, որ այդ ձեռնարկությունը այնքան լուրջ ու օգտակար մի բան լինի, որ կազմել զրավան երևույթ: Ես միշտ բողոքել եմ այն մտքի դեմ, թե ժողովրդական գիրքը անպատճառ պետք է փոքրիկ լինի: Այսօր նկատում ենք, որ ամեն տեղ սկսել են բուռնությունների գրականություն, 2—5 էրեսանոց գրքեր: Տպում են այստեղ, Բագու, Պետերբուրգ: Դա չափազանցություն է, միակողմանիություն է, որ կվնասե զրականությունը:

Գիրքը պետք է էժան լինի: Բայց ոչ անպատճառ փոքրիկ: Տվե՛ք, եթե կարողանում եք, «Վերք Հայաստանի» 20 կոպեկով— հրաշալի կլինի: Բայց մեզանում հեշտ են համարում մի շնչին, աննշան պատմվածք թարգմանել և 3 կոպեկով ծախել, քան մի այդպիսի իստակ ժողովրդական գործ կատարել: Մենք ունենք ընթերցող խավեր, որոնք անդադար դիրք են պահանջում, այդ խավերը չեն կարող բավականանալ մի 2 ամիսը մի անգամ լույս տեսնող մի տետրակով. նրանք այնքան թանկություն մասին չեն մտածում: Բաֆֆիի «Դավիթ-բեկը» նոր հրատարակվեց և թե տեսե՛ք թե ինչպես է, չնայած իր թանկ գնին անգամ, տարածվում է: Գուդտնիքը ուրեմն էժանություն մեջ չէ:— Լուրջ, հիմնավոր և հանրամատչելի մի գործ— ահա ինչ էր ցանկալի տեսնել Ձեր ձեռնարկության մեջ: Մեզանում հրատարակությունները կատարում են մեծ մասամբ անձեռնահաս անհատներ: Դուք այդպես չպիտի լինեք...

Հարգելի բարեկամ, ինձ խնդրում են, որ Ձեզ մի փոքրիկ ներդրումն տամ: Այստեղի «Հերմես» տպարանը, որի մեջ ես էլ մի փոքրիկ մաս ունիմ, ուզում է Հերբերտի ձուլարանից հայերեն տառեր բերել տալ, բայց նրա դրած նամակները անպատասխան են մնում: Արդյոք չե՞ք կարող իմանալ, թե ի՞նչ է պատահում. գոյություն ունի՞ այդ ձուլարանը, եթե այո, խնդրում ենք ստանաք նրա հայերեն բոլոր տառերի նմուշները և ուղարկեք, որպեսզի տպարանը կարողանա բերել տալ: Ձուլարանի հասցեն կարծեմ այս է. Чернышевский пер. соб. дом.

14.

Մայիսի 29, 1904
Թիֆլիս

Մարտի սկզբում Ձեզ համակ էի գրել Ձեր ցույց տված հասցեով (Почтамт дозостребования): Զգիտեմ, ստացել եք, թե ոչ:— Գ. Խալաթյանը ինձ գրել է, որ իր բացակայության ժամանակ «Ս. Մեսրոպի» տպագրության արխիվով դիմումներ անեմ Ձեզ:

Արդ հայտնում եմ, որ տպագրությունը արագ առաջ է գնում: Մինչև այժմ 200 էրեսից ավել ստված է: Մի քանի թերթ շուտով կուղարկեմ Ձեզ: Շատ պիտի եմ օր առաջ վերջացնել գործը: Հաղիվ եմ շունչ քաշում, կիսակենդան դրություն մեջ եմ, պետք է գոնե մի անգամ էլ հավատալ բժիշկներին և զնալ հանքային ջրերը: Գուցե այս անգամ փոքր ինչ թեթևություն դգամ, ով գիտե՞: Դնալով դրությունս վատանում է, թեև ութ ամիս է, լատինական խոհանոցի բոլոր միջոցները փորձել եմ: Ինձ համար անհնարին կլինեք ջրերը հնալու մասին մտածել անգամ, եթե չլինեք այս աշխատությունս, որ ընդունվեց Ձեր հանձնաժողովի կողմից և որի համար այնքան շնորհակալ եմ Ձեզանից: Այժմ եմ հասկանում, թե ինչ է նշանակում առողջությունը մի հայ գրողի համար: Սարսափելի է հիվանդության դեմ կռիվելու միջոց ձեռք բերել կրկնապատկելով աշխատանքը: Մի տարի է, ես պայքար եմ մղում իմ բժշկի հետ: Նա պահանջում է հանգստություն, ես ջախջախիչ փաստերով ապացուցում եմ, որ դա դատարկ խոսք է իմ վերաբերմամբ: Հանգստություն կենդանակեր սոված մնալ: Բժիշկը միշտ նեղն էնկած առում է. «աչնուամենայնիվ, պետք է հանգստանալ, քիչ աշխատել»: Որքան ծիծաղելի է այդ «այնուամենայնիվը»: Ի՞նչ եր-

կարացնեմ, սիրելի բարեկամ, Դուք ինքներուդ էլ լավ գիտեք աւա բոլորը, փորձել եք անձամբ: Անցնենք գործին:

Ես կարծում եմ, որ ամենաուշը մինչև հունիսի 15-ը տպագրությունը վերջացած կլինի: Մի դժվարություն կա: Դուք որոշել եք, որ գրքի ճակատին տրպվի «Սահակ-Մեսրոպյան զրադարան № 1», մի անուն, որ շատ իրավացի է, և շատ ցանկալի է: Բայց բանն այն է, որ ցենզուրան թույլ չէ տալիս այդպիսի վերնագիր: Պ. Հ. Առաքելյանը գիրք¹ է հրատարակում, ուզում էր անվանել «Մեսրոպյան զրադարան», բայց թույլ չտվին, ասելով թե դրա համար պետք է առանձին իրավունք ստանալ: Ես դեռ չեմ փորձել խոսելու այդ մասին ցենզուրական կոմիտեում, բայց համարյա համոզված եմ, որ աջողություն չպիտի գտնեմ: Առաքելյանը շատ է աշխատել, բայց ոչինչ չէ կարողացել անել: Մի քանի օրից հետո էս կմտնեմ կոմիտեո և ինչ պատասխան ստանամ կհեռագրեմ Ձեզ: Խնդրում եմ ի նկատի ունեցեք այս հանգամանքը և ինձ հեռագրով ցույց տվեք, թե ինչ պիտի անեմ: Գ. Խալաթյանը գրել էր, թե դուք ուղում եք կլիշե պատրաստել տալ: Խնդրեմ հեռագրի մեջ այն էլ հայտնեք, կլիշե՞, կլիշե, թե՞ ոչ:—Իսկ «Հրատարակություն Ա. Պողոսյանի» խոսքերի դեմ ցենզուրան իհարկե, ոչինչ արգելք չի ունենա և նրանք կտպվեն:

Պ. Խալաթյանը հարցրել էր իմ կարծիքը գնի մասին: Իմ կարծիքով, ամբողջ հարցը կախված է նրանից թե ինչպես եք վերաբերվում շահի հարցին, այսինքն, թե օգուտ որքա՞ն եք նշանակած հրատարակությունից: Պետք է վերդնել 3000 օրինակ և 30% դեղջ դուրս գալ գնից: 50 կոպեկ, իմ կարծիքով, լծան է. թեև շատ ցանկալի կլինեք, այդ դեպքում դուք ուղղակի վնաս կանեք, մանավանդ եր գիրքը, ինչպես այժմ է հրկում, Ձեր ցույց տված գիրքով 350 երեսից ավել կունենա: Պ. Խալաթյանը կանգ է առել 75 կոպեկի վրա. իմ կարծիքով դա շատ է, ինքներդ էլ հաշվեցեք, կարծում եմ որ 70 կնշանակեք: Խնդրում եմ այս մասին էլ ինձ տեղեկություն սաք:

Ստացել եմ 500 ռուբլի: Թղթի գնի մեջ կարողացա լիջում անել տալ, խոստանալով կանխիկ վճարում: Տպարանն էլ չէ կարող երկար սպասել: Միջոցառ Պ. Խալաթյանը գրում է, որ Ձեզ հանձնված է 200—300 ռուբլի էլ ուղարկել ինձ: Եթե այդ բոլորը տամ ծախսերի, այն ժամանակ էս ինքս պիտի նստած մնամ ալստեղ. դնալու համար կոպեկ չեմ ունենա: Չգիտեմ ինչպե՞ս պիտի լուծեք այս դիլեման: Համենայն դեպս, խնդրում եմ ինձ լիուրի տեղեկություններ տալ այս մասին:

Վերջապես կարողացա վերջացնել «Ս. Մեսրոպի» տպագրությունը, ծախսերը հաշվել: Այս տպագրական դուրծը միշտ ինձ շարշարել է, կարծում էի թե այժմ, ունենալով հրատարակիչ, քիչ կշարշարվեմ, բայց էլի չեղավ:

Գիրքը տպված վերջացած է, բրոշյուր արված: Թե որքան եմ կարողացել Թիֆլիսի սրահանների մեջ փոքր ի շատե մաքուր և խնամքով գործ կատարել, թողնում եմ Ձեր դատաստանին: Տպված է 3620 օրինակ. ադ քանակությունից էս վերցրի Ձեր որոշած 300 օրինակը. մնացածը սպասում է Ձեր կարգադրությանը: Շտապեցեք հայտնել, թե ուր և ում պեսեք է ուղարկել: Եվ որովհետև ես մինչև սեպտեմբեր այստեղ չեմ լինելու, ուստի կխնդրեի անմիջապես

գրեք «Հերմես» տպարանի կառավարիչ պ. Եղիշե Թուփչյանին, որին հանձնել նաև բոլոր գրքերը և խնդրել եմ կատարել Ձեր կարգադրությունները: Ինքս Ձեր հաշվի գրքերից 50 օրինակ հանձնել եմ Կենտրոնական գրավաճառանոցին, 50 օրինակ էլ «Հուտենբերգ» գրավաճառանոցին, որպեսզի մինչ Ձեր կարգադրությունը եղած պահանջները կատարեն:

Հարգելի բարեկամ, գրքեր տպագրելը բավական չէ, պետք է նրանց տարածել: Ահա մի մեծ աշխատանք Ձեզ համար: Պետք է այնպես անել, որ ամեն տեղ լինեն գրքեր, իսկ դրա համար Դուք հարաբերություններ պետք է սկսեք գրավաճառների հետ: Պ. Խալաթյանը հարցնում էր իմ կարծիքը՝ թե ինչպես պետք է կազմակերպել գրավաճառությունը: Իմ կողմից ես կարող եմ հանձնարարել միայն մի գրավաճառանոց — Թիֆլիս, «Հուտենբերգ», որ թե լավ կազմակերպել է, հայերեն գրքերի վաճառումը և թե ունի կապեր գավառական գրավաճառների հետ: Իմ կարծիքով լավ կլինի, եթե գրքերի, եթե ոչ բոլոր քանակությունը, գոնե մեծ մասը հանձնել նրան, կոմիսիայով ծախելու: Նա շատ օգտակար կլինի և ճիշտ հաշիվներ էլ պահում է:

Պ. Թուփչյանի հասցեն է՝ Типография «Гермес» Е. Топчяну, իսկ «Հուտենբերգի» հասցեն. Книжная торговля «Гутенберг», Галустяну.

Այժմ հաշիվների մասին: Առանձին թղթի վրա գրում եմ հաշիվ ուսուներեն լեզվով: Ինչպես խնդրել է պ. Խալաթյանը, նրա անունով: Իմ նախահաշիվով դուրս էր եկել տպագրական ծախս մոտ 800 ռուբլի, բայց այն ժամանակ ձեռագիրն էր տոջևս և կարծում էի թե դուրս կգա գիրքը մոտ 322 երես, մինչդեռ տպվեց ստացվեց 344 երես: Թե այդ պատճառով և թե այն պատճառով, որ գրքի երեսը գունավոր տպելու համար մի քանի ծախսեր չխնայեցի, ապա գրության ընդհանուր արժողությունը 848 ռուբլի դուրս եկավ: Ես խոստացել էի, որ 800 ռ[ուբլի] մաքսիմալ գինը կլինի, բայց կրճատել չկարողացա որքան աշխատեցի. խնդրում եմ նկատի ունենաք առանձին-առանձին առարկաների ծախսերը: Դուք կտեսնեք, որ իմ նախահաշվի փեքը եմ. սխալված եմ նշել միայն կազմի գին մեջ: Ես հաշվել էի բոլորը հատին $1\frac{1}{2}$ կոպեկ, բայց այդ գնով ոչ ոք չհամաձայնվեց կազմել, ստիպված եղա հատը 5 կոպեկ նշանակել: Այսպես, թե այնպես, խոստովանում եմ որ իմ սխալ նախահաշիվով սխալ հասկացողություն եմ տվել Ձեզ ծախսերի մասին: Եվ իմ մեղքը քավելու համար պատրաստ եմ վարձատրությունից վերադարձնել Ձեզ 800-ից ավելացած գումարը:

Ես ստացել եմ. 1) պ. Խալաթյանից 500 ռուբլի և 2) Ձեզանից 500 ռուբլի: Այս հաշիվով դուրս է գալիս, վճարելով բոլոր ծախսերը, 848 ռուբլի, ինչ մոտ մնում է 152 ռուբլի: Այս գումարով, իհարկե, անհնարին է դնալ հանքային չրերը, մանավանդ որ ես պետք է հոգամ և ընտանիքիս կարիքները: Բայց որովհետև այստեղ մնալու այլևս ոչ մի հնարավորություն չկա, ուստի ես պարտք եմ վերցնում և վաղը ճանապարհվում եմ Պյատիգորսկ, հույսով եմ վերադարձիս իսկույն կստանամ Ձեզանից մնացած վարձատրությունը և վճարեմ պարտքս: Ինչ նամակ կարող եք գրել՝ Пятигорск, Верхний бульвар, доктору В. М. Арцруни — հանձնել ինձ: Հույսով եմ, որ կգրեք թե ինչ եք անում գրքերի և հաշիվների մասին: Ինչ մնում է ի վերջո խորին շնորհակալությունս հայտնել Ձեր մասնաժողովին, ինչ հասցրած օգնության համար: Իմ հուսահատ դրության մեջ ես Ձեր հատկացրած գումարը տրամադիր եմ վարձատրություն չհամարել, այլ Ձեր բարեկամական վերա-

բերմունքի մի գեղեցիկ նշան:— Դուք գրում եք, որ Ջեր նպատակն է օգնել հայ հեղինակներին: Այո, դա բոլորովին ճիշտ է և ես ամենայն անկեղծությամբ խոստովանում եմ, որ Ջեր առաջին գործը իսկ և իսկ օգնություն էր: Շնորհակալ եմ: Ցանկանում եմ Ջեր համակրելի գործին ամեն տեսակ աջողություն:

16

Սեպտեմբերի 14, 1904
Թիֆլիս

Ստացել եմ Ջեր նամակը Պյատիգորսկում, պետք էր այնտեղից էլ պատասխանել, բայց այսօր-էգուց ասելով, մնաց: Առհասարակ «ոչինչ չանելու» տրամադրություն էին ներշնչել ինձ բժիշկները և ես ամառը մի տող անգամ չգրեցի: Այժմ վերադարձել եմ իմ սովորական պարապմունքներին և էլի նույնը: Էլի հինը— հիվանդ, սև աշխատանք մի կտոր հացի համար և այլն...

Պյատիգորսկից ես չէի կարող ուղարկել պ. Պողոսյանին իմ գրքից, քանի որ չունեի: Այժմ ուղարկում եմ Ջեր անունով երկու հատ— մեկը Ջեզ, մյուսը պ. Պողոսյանին: Գ. Նալաթյանից ոչինչ տեղեկություն չունիմ, թեև մինչև հանքային ջրեր գնալը նամակ եմ գրել և նրան: ...Բժիշկները մի առանձին օգնություն չեն հասցնում ինձ, բայց ավելացնում են ծախսերս: Այժմ, նրանց պահանջով, վարձել եմ բնակարան ամիսը 46 ռուբլով: Մի վարձ է սա, որ կյանքումս դեռ տված չեմ շորս սենյակի համար: Այնքան նեղված եմ այս ծախսերով, այնքան դժվարացել է ապրուստը ինձ համար, որ սկսել եմ լուրջ կերպով մտածել մի ուրիշ պաշտոն գտնելու մասին: Շատ կարելի է, որ նույնիսկ հեռանամ Թիֆլիսից, հետևաբար և հայոց գրականությունից, որ ապրեցնել չէ կարողանում:

Ջրերում ծանոթացա պ. Կուսիկյանի հետ, թեև կարճ էր մեր տեսակցությունը, բայց բավական խոսեցինք և ես իմացա թե ինչ գործերի մասին եք մտածում՝ Սահակ-Մեսրոպյան գրադարանի համար: Շատ հավանեցի, շատ ոգևորվեցա: Ահ, եթե կարողանայիք տալ այդպիսի գործեր: Բայց դուք գնում եք, աշխատողներից մեկը պակասում է:

Սրտանց շնորհավորում եմ Ջեզ, սիրելի բարեկամ: Եկատերինոգորից պ. Սաթուկյանը գրել էր ինձ, որ Ջեզ երեք տարով ուղարկում են արսուսահաման, այդ նամակը ես դուրս գալուս օրերը ստացա և այնքան ուրախացա, որ շտապեցի խնդակցությունս հայտնել պ. Սաթուկյանին: Դուք ինձ ոչինչ չեք գրում այդ մասին, բայց ես չեմ կարծում, որ եկատերինոգորցիների ցանկությունը ցանկություն էլ մնա և հավատում եմ, որ Ջեզ էլ տրվի երեք տարի առաջ օդ շնչելու միջոց: Տա Աստված, որ այդ օդը Ջեզ համար նոր կյանք, նոր դիրք ստեղծելու առիթ դառնա: Միտքը ըստ ինքյան այնքան գեղեցիկ էր, որ հանքային ջրերի իմ ծանոթները հիացան և ոգևորվեցին, երբ ես հաղորդեցի նրանց այդ լուրը: Ես հույս տունեմ, որ շուտով կստանամ Ջեզանից հավաստիացում թե իմ իմացածը իրականություն է և դուք համակրանքի աջակցի մի սիրուն ցույց վայելելու երջանկությունից հեռու չեք:

Գրքերի մասին մինչև այժմ կարգադրություն չեք արել և ամբողջ քանակությունը դեռ դարսված է տպարանում: Մինչդեռ գիրք տպելը դեռ առաջին գործը չէ, պետք է և տարածել նրան: Պետք է ուղարկել զանազան կողմեր, մանավանդ պետք է հաճախ հայտարարություններ տպել «Մշակի» մեջ...

Իմ ընկերներին ես տվել եմ աշխատությունս, բայց երևակայեցեք, ոչ ոք մինչև այսօր մի բառ անգամ չէ ասել ինձ թե ինչպիսի աշխատություն է, որովհետև համոզված եմ, ոչ ոք չէ էլ կարդացել: «Մուրճը» նույնիսկ չէ հայտնի չորքիս մասին, թեև դեռ հունիսին եմ ուղարկել նրան: Այսօր իմացա, որ ուշում են մի բան դրել զրքի մասին, բայց զրոյ չկա: Տեսնում եք որքան փառավոր դրություն է: Մնում է ընթերցողի հետ գործ ունենալ: Նրան պետք է հիշեցնել, որ կա այսպիսի մի գիրք: Անհրաժեշտ է հայտարարություններ տպել: Բայց դեռ պահեստի տեղն էլ չեք նշանակել: Ես գրել էի Ձեզ «Հուտենբերգի» մասին, չեմ ուզում ասել որ անպատճառ նրան տաք, բայց որ անհրաժեշտ է պրավաճառությունը կանոնավորել, այդ իհարկե, Դուք շատ լավ եք հասկանում:

Իմ «Ռուսահայոց գրականությունը» վերջացել է, շուտով լույս կտեսնե, առանձին գրքով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

1. Լեո, Գրական դեմքեր, «Մշակ», Թիֆլիս, 1899, №№ 161, 162, 163, 164, 165:
2. Լեո, Ստեփանոս Նաղարյանց, հատ. 1, 2, Թիֆլիս, 1902:
3. Սմբատ Շահազիզ, Հրապարակախոս ձայն (հուլիս Ստ. Նաղարյանցի մասին), Մոսկվա, 1881:
4. Նամակագիրը նկատի ունի «Հանգես գրականական և պատմական» կիսամյա գիրքը, որը լույս է տեսել 1888—1896 թթ. Մոսկվայում, որտեղ տպվել են Ստ. Նաղարյանցի նամակներից. 1888, գ. 1, էջ 267—275, 1895, գ. 6, էջ 111—148, 1896, գ. 7, էջ 322—325:
5. «Լուսմա», Թիֆլիս, 1889, գիրք Բ, էջ 270—273, 1896, գ. Բ, էջ 336—339, 1897, գ. Ա, էջ 221—222, գ. Բ, էջ 330—337, 1898, գ. Ա, էջ 268—270, գ. Բ, էջ 252—258, 1899, գ. Ա, էջ 224—228, գ. Բ, էջ 264—270:

2

1. Մեզ անհայտ է, թե նամակագիրը Մատուրյանի որ հոդվածը նկատի ունի:
2. Փանյանց Մելքոն, Հաղարյան ճեմարանի երկարամյա տնտեսը, որ մոտ փոխհարաբերության մեջ է եղել Ստ. Նաղարյանցի հետ:
3. Լեոն նկատի ունի Ալեքսեյ Նիկոլաևիչ Վեսելովսկու (1843—1918) գիտական գործունեության 30-ամյա հոբելյանը:
4. Քալանթար Ալեքսանդր Հայրապետի (1855—1913), գյուղատնտես-գիտնական, հրապարակախոս, հասարակական գործիչ: Ավարտել է Մոսկվայի Պետրովսկի գյուղատնտեսական ակադեմիան, գրել է Ռուսաստանի մի շարք նահանգների անասնապահության մասին, Անգրկովկասում ղեկավար պաշտոն է տարել գյուղատնտեսության գծով, լույս է ընծայել «Անասնապահությունը Կովկասում» գիրքը (1891, Թիֆլիս): Խմբագրել է «Кавказское сельское хозяйство» ամսագիրը, 1893—1913 թթ.՝ «Մշակ» լրագիրը:

3

1. Խոսքը Խաչատուր Քուլուկ-Հովհաննիսյանի (1853—1919) մասին է:
2. Նկատի ունի Ю. А. Веселовский, Литературные очерки (т. I, М., 1900) գիրքը:

4

1. Ալեքսանդր Մատուրյան, Նամակ Մոսկվայից (Պուշկինի հարյուրամյակի տոնակատարության յանի), «Մշակ», Թիֆլիս, 1899, №№ 73, 81, 88, 102, 104, 108: Ալեքսանդր Մատուրյան, Մովի կախարհը (2. Այվազովսկու հիշատակին), «Մշակ», Թիֆլիս, 1900, № 79:

2. Սարգսյան Լևոն Ռուբենի (1862—1926) — բանասեր, պատմաբան, հրապարակախոս: Սովորել է Լազարյան ճեմարանում, ավարտել է Մոսկվայի կայսերական համալսարանը, պաշտոնավարել է Լազարյան ճեմարանում, Ներսիսյան և Գայանյան դպրոցներում, խմբագրել է «Մուրճ» ամսագիրը: Գրել է «Ժողովրդական կրթության գործը մեզանում», «Պատմություն Լազարյան տոհմի և Լազարյան ճեմարանի արևելյան լեզվաց» աշխատությունները:

5

7. Ալ. Մատուրյան, Նամակ հորմի աիերից, «Մշակ», Թիֆլիս, 1900, №№ 85, 99, 103, 118, 195, 204:

10

1. Լևո, Գրիգոր Արծրունի, հատ. 1, 2, 3, Թիֆլիս, 1902—1905:

11

1. Համբարձում Առաքելյան (1855—1917) — գրող և հրապարակախոս, բանասեր, թարգմանիչ: Սովորել է Թավրիզում, Բաքվի ռեալական դպրոցում, ավարտել է Պետերբուրգի Ռազումովսկի ակադեմիան, խմբագրել է «Մշակ» լրագիրը (1913—1917), «Արոր» ամսագիրը (1910—1912): Նրա գրվածքներից են «Զհուդ Քուշան», «Եղոյի չար բախտը», «Անհաշտը», «Լուսաբեր», «Ծագեց լույս», «Մի ամիս Արևելքում», «Պարսկահայերի անցյալը, ներկան և ապագան», «Հանրագիտարան»՝ լույս է տեսել առաջին հատորը (1915, Թիֆլիս):

12

1. Լևո, Ռուսահայոց գրականությունը, «Գեղունի», Վենետիկ, 1903, № 1—10: Առանձին գրքով՝ Վենետիկ, 1904 և 1928:

13

1. Լուր էր տարածվել, թե Լևոն մահացել է:
2. Լևո, Ս. Մեսրոպ, Թիֆլիս, 1904:

14

1. Նկատի ունի 2. Առաքելյանի «Մի ամիս Արևելքում» ճամփորդական ակնարկները (Թիֆլիս, 1904):

ПИСЬМА ЛЕО АЛЕКСАНДРУ ЦАТУРЯНУ

В. Г. ВАРДАНЯН

(Резюме)

Представленные выше 16 писем известного историка, писателя, публициста Лео (Араке́ла Бабаханя́на, 1860—1932), адресованные видному поэту Александру Цатуряну (1865—1917), содержат интересные исторические, филологические, научные факты и сведения о жизни и творчестве обоих представителей армянской интеллигенции.